

ՆՈՐ ԱՎԵԾԱՊԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 29 ՓԵՏՐՈՒԱՐ, 1932

ԹԻԻ 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սահմանեն Անդին

Տ. ձ. Խ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Սիրոյս Դրդապատեանը

Ա. Կ. ԿԻԻԼՊԵՆԿԵԱՆ

Կոստի Եւ Կոստապրուսիւն

ՊԱՏ. Ա. ՉԱԳՄԱԳՃԵԱՆ

Տր. Լ. Լի

ՏՐ. ձ. Է. ՄԷՐԻԼ

Րեմզի Մեհսոնայս

ՎԵՐ. Յ. Կ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Կիլիկիա Անուան Ծագումը

ՎԵՐ. Ե. ՔԱՍՈՒՆԻ

Գիսական Քրոնիկ

ՔԱՂԵՅ՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

Հայեր Յրանապի Մեջ

Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

ՋԱՆԻՅ, ԷՋԸ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՃ ՀԱՆԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, տարեկան բաժնեգրին է 150 զրուշ սուրի. Սուրբիայ համար, և մէկ աւ կէս տոլար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

Յօդուածներու բնագիրները չեն ղըրկուիր եթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ. չհրատարակուող յօդուածներու համար պէտք է ղրկել փոստի ծախսը:

Յօդուածները պէտք է գրուին թուղթին մէկ էջին վրայ մեկանով, դիւրընթեռնի մաքուր կերպով:

«ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ» ԿԸ ՆՈՒՐԵՆ

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԵԿԵՂԵՑԻՒ Ե. Բ. Զանից Ընկ. և մէկ տարուան «Նոր Աւետարեբ» կը նուիրէ Եօդուած Օլուգի Հայ Աւետ. Եկեղեցիին:

ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ԼԱԼԷՅԱՆ, Հալէպ, մէկ տարուան Նոր Աւետարեբ կը նուիրէ Տիար Յակոբճան Լալէեանի, Պուէնոս Այրէս:

ՍՏԱՅԱՆՔ

Մասնաշար «Վերածնունդ».—

Թիւ 1. Շիրինի ՍԻՐՏԸ, հեղինակ Եղ. Հայպետ, Թէհրան, 3 ղուան:

Թիւ 2. ՊԱՐՍԿԱՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ, հեղինակ Արամ Երեմեան, գինն է հինգ ֆրանք Red. Veratznound, Téhéran Persé.

«ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»Ի ՄԱՏԵՆԱՇԱՐԸ

Պատանիներու ընթերցանութեան համար կըթիչ գիրքերու պակասը խիստ զգալի է: Այս կէտը նկատի առնելով «Նոր Աւետարեբ»ի խմբագրութիւնը այս անգամ հրատարակած է՝

ԲԱՐՈՅԱՎԷՊԵՐ

անուն հատորիկ մը, որ կը պարունակէ խիստ հետաքրքրական և բարոյացուցիչ 25 իրական պատմութիւններ և պատմուածքներ: Ամէն պատանի, ինչպէս նաև զատարակներ և ծնողներ շատ օգտակար պիտի գտնեն զայն: Գինն է 25 ղրշ. սուրիական կամ 50 սէնթ (Ամերիկայի Եգիպտոսի համար): Դիմել խմբագրութեան հասցէին:

ՆԱԽ ԴԻՄԵՑԷՔ

ՀՐԱՆՏ ՔԵՕՇՔԷՐԵԱՆԻ

185 ԹԻԻ ԽԱՆՈՒԹԸ, ԽԷՆՏԷՔ,

ուր պիտի գտնէք՝ ճաշակաւոր, տկուն և աժան

ԿԱՆԱՆՑ ԶԵՌԻ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ,

ԹՂԹԱՊԱՆԱԿՆԵՐ

ԵՒ ԿՕՇԻԿՆԵՐ

փորձառութիւն ունեցած էր: Երեսուն տարի իր բոլոր շահագրգռութիւնը և ջանքերը Մարաշի Աստուածաբանական Ճեմարանին յատկացուց: Անիկայ շարունակ կը պայքարէր ապառողջութեան դէմ, որ զինքը կ'ստիպէր դասերը դադարեցնելու, նոյնիսկ երբեմն շաբաթներ երոյժ Մարաշէն հեռանալու: 1895ի ջարդին ան Մարաշ կը գտնուէր, անիկայ ականատես եղաւ Ճեմարանի շէնքերուն հրդեհումին և կարգ մը ուսանողներու սպաննումին: Իր միսիոնարական կեանքին մէջ երկու անգամ իր ընտանեկան բոյնը քանդուեցաւ՝ ընտանիքին մօրը մեռնելովը: Եւ ինչ որ իրեն աւելի յուսախաբութիւն պատճառած էր իր վերջին արձակուրդէն ետքը Թուրքիա վերադառնալու անկարողութիւնն էր:

Մարաշ 50—60 հազար բնակիչներով քաղաք մըն էր, և միսիոնարական գաշտի կեդրոն մըն էր, որուն կապուած էին որոշ թիւով երկրորդ կարգէ շրջաններ: Տր. Լի շատ ընդլիք ունէր, այնպիսի գործեր զոր ունէ միսիոնար մը ընելու կոչուած է: Այս գործունէութեանց վրայ իր մասնաւոր դրոշմը ձգեց: Մարաշի մէջ երեք եկեղեցիներ կային, ուր ան յաճախ կը խօսէր կամ Ս. Գրքի դասարանի մը դաս կուտար: Մարաշի Մանչերու Ակադեմիային տընօրէնն էր, Կ. Թ. Ազգական Գողէճի վարչութեան սովորաբար կը մասնակցէր: Աւետ. Շրջանային Վարչութեան (Station Committee) մշակական անդամը և յաճախ ատենապետն էր: Աւետ. Շրջանին հաշիւները կը պահէր, քաղաքի մարդոց հետ ընթացիկ գործերու մասին յարաբերութիւններ ունէր: Կառավարական գործերով և կալուածական հարցերով կ'զբաղէր: Այնթապի Գողէճին Վարչութեան յաճախ և կարեւոր մէկ անդամն էր: Անիկայ կը մասնակցէր նաև ընդհանուր միսիոնարա-

կան գործին: Այս գործունէութեանց մէջ անոր ունեցած ազդեցութեան մասին գործակից մը սապէս գրած է:

«Տր. Լիի ազդեցութեան տակ զբաղող ուսուցչի մը համար անկարելի է մէկ գիծի վրայ շարունակ գործել: Ան պէտք է նորմութոսներ փորձէ, և մասնաւոր միշտ միտքը պէտք է արթողն պահէ:»

«Անիկայ միշտ իբր վարիչ և իբր գործադիր մեծ կարողութիւն ցոյց տուած է, և զիտէր թէ ինչպէ՞ս գործը բարձրագոյն չափանիշին համեմատ պահել պէտք էր:»

«Անոր ազդեցութիւնը զգալի էր քաղաքի գործի հրապարակին վրայ շատ ընդարձակ շրջանակով: Ամէն ոք գիտէր՝ թէ Տր. Լիի հետ յարաբերութեան մէջ մեծագոյն պարկեշտութիւն և բժախնդրութիւն կը պահանջուէին:»

Բայց Տր. Լիի գործունէութեան գլխաւոր գիծը կը կազմէ Մարաշի Աստուածաբանական Ճեմարանին իբր պետը իր ծառայութիւնը: Ամէն երեք տարին անգամ մը, Կեդրոնական Թուրքիոյ մէջ Աւետ. եկեղեցիներու հովուութեան պատրաստուելի փափաքող՝ 12 էն պակաս կամ աւելի թիւով՝ երիտասարդներու խումբ մը կը հաւաքուէր, ուսանողական եռամեայ անթերի դասընթացքի մը հետեւելու համար:

Պատահաբար Թուրքիոյ միսիոնարական ուրիշ մէկ դաշտէն ալ ուսանող մը կը գտնուէր: Պատահաբար Հայ Առաքելական թուանոց մը եւս կը գտնուէր քահանայութեան պատրաստուելու համար: Երեսուն տարուան միջոցին, այսպիսի տասը խումբեր միայն կարելի էր ունենալ:

Մասնաւոր պարագաներու տակ մասնակի յաւելուածական դասընթացքներ ալ կը պատրաստուէին, լման գողէճական ուսումէ զուրկ ուսանողներու համար: Կանոնաւոր դասընթաց-

քը, ոսկայն, Գոլէճի ուսումնաւարտներու վերապահուած էր: Տր. Լիի մեծ ջանքն ու փափաքն էր հաստատութեան աստիճանը բարձր պահել իբր գոլէճական ուսումնաւարտներու զըպրոցը, և այս մասին թէ՛ միսիոնարները և թէ՛ տեղական եկեղեցիները իրեն թիկունք կ'ըլլային: Բոլոր կանոնաւոր աշակերտները պէտք էին Եւրայեցերէն, Յունարէն, Փիլիսոփայութիւն, Մեկնաբանութիւն, Պատմութիւն, Բուն Աստուածաբանութիւն (Systemetics) և հովուագիտութիւն ուսանիլ, ասկէ պակաս ուսումով մէկը պէտք չէր վկայական առնելու յայտնուենալ:

Ի՞նչ էր ասոր արդիւնքը: 12 անդամներէ բաղկացեալ՝ 1905 ին ուսումնաւարտ եղած՝ կարգի մը տեղեկագրութիւնն է հետեւեալը: Բոլորն ալ Կեդրոնական Թուրքիոյ մէջ հովուական պաշտօն ստացան: Ասանցմէ չորսը 1906 ի Ատանայի ջարդին սպաննուեցան: Ուրիշ չորսը 1915 ի տարագրութեան

միջոցին մահացան, խաղաղ կամ անտանելի պայմաններու տակ: Մնացեալ չորսէն մէկը Հարաւային Ամերիկա է, երկրորդը՝ առժամեայ հովիւն է Հալէպի էմմանուէլ եկեղեցիին, 1500 հոգինոց ժողովուրդով, երրորդը՝ զրեթէնոյնքան մեծ՝ Պէյրութ քէմփի եկեղեցիին հովիւն է, և չորրորդը՝ Յունաստանի բոլոր Հայ Աւետ. եկեղեցիներուն ընդհանուր աւետարանիչը և վերահսկիչն է:

Ամէն Կիրակի Տր. Լիի ձեռնասուն աշակերտները կը քարոզեն Հալէպի երկու և Պէյրութի մէկ մեծ եկեղեցիներուն մէջ, Անտիոքի մօտ լեռնային գիւղերու եկեղեցիներուն մէջ, Դամասկոսի եւ Եաֆայի մէջ, Աթէնքի շրջանին եկեղեցիներուն մէջ, Պուէնոս Այրէսի, Գալիֆորնիայի, Թրոյի, Նիւ Եորքի, Քէմպրիճի, Մէնչէսթըրի մէջ. և անոնց միջոցաւ Տր. Լի տակաւին կը խօսի:

Ճ. Է. Մէրիլ

(Շարունակելի)

ԿԻԼԻԿԻԱ ԱՆՈՒԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Գրեց՝ ՎԵՐ. Ե. ՔԱՍՈՒՆԻ

(Շար. եւ վերջ)

Զարմանալի է որ Կիլիկիա անունը չի պատահիր Հատեան մեծ կայսրութեան բեւեռագիր արձանագրութեանց մէջ մէկ անգամ իսկ, թէ և Տարսոն, Ատանա, Կոմանա և ուրիշ քաղաքներ կը յիշուին հոն: (Garstang, The Hittite Empire, p. 186 n. 3): Բայց ասկէ չի հետեւիր թէ Կիլիկիան արդէն Կիլիկիա հաստատուած չէին, այլ թէ Հատեանք, գուցէ քաղաքական նշկատումներով, չէին ռզերայդ անունը գործածել: Կարսթանի, Պողազքէոյի արձանագրութեանց յայտնու-

թիւնները ռաշադիր քննութենէ մը անցունելով, սա եզրակացութեան կը յանգի թէ Կիլիկիա իր ամէնէն ընդարձակ տարածութիւնով մաս կը կադմէր, և իրօք կեդրոնական մասը, Հատեանց հարկատու մեծագոյն իշխանութիւններէն Արծաւայի թագաւորութեան. (ibid. pp. 13 63 182.): Արդ, եզրապատի պատմական արձանագրութիւնները Փոքր Ասիոյ իշխաններու շարքին մէջ ընդհանրապէս Խեապուց թագաւորէն անմիջապէս յետոյ Կոտէի երկրին իշխանը կը յիշեն. իսկ Պողազ-

քէօյի արձանագրութիւններէն կը տեսնենք որ Հատեան մեծ աւատականներուն մէջ առաջին տեղը Արծաւայի հարկատու թագաւորին կը պատկանի. որով հաւանականութենէ հեռու չէ կարծել թէ Արծաւայի երկիրը նոյն է Կոտէի երկրին կամ Կիլիկիոյ հետ: Այս կարծիքը հաստատող պարագայ մը սա է որ, ինչպէս Թէլ—Ամարնայի բեւեռագիր պատճէններէն կարելի է տեսնել, Արծաւայի երկրին թագաւորը Տարխունտարտուշ բուն Հատեանց լեզուով նամակներ ալ գրած է Ամենովիս Գ. փարաւոնին: Եւ դարձեալ, Ռամսէս Բ. ի 45 երորդ տարին երբ Խետացւոյ մեծ թագաւորը Խատտուսիլ Գ., որ փարաւոնին աներն էր, Եգիպտոս իջաւ իր վեհաշուք փեսային այցելութիւն մը տալու, ըստ մեհենագիր արձանագրութեանց՝ անոր կ'ընկերանար Կոտէի (Կիլիկիոյ) հարկատու դաշնակից թագաւորն ալ, որ այսպէս չի կրնար Արծաւայի թագաւորէն տարբեր մէկը ըլլալ: Իսկ այս մասին վրձնական ապացոյցը մեզի տուող պարագայ մըն ալ սա է որ Մուտալլու Գ. Հատեան մեծ թագաւորին օրով՝ Արծաւայի թագաւորին ստորակարգեալ չորս գլխաւոր իշխաններէն մէկն է Աւաքշանտու (Աղեքսանդր), որու ոստանն էր Ույրուս կղզեքաղաքը, որ է դասականաց Երիուսան և Հայա-Կիլիկիոյ Կողիկոսը, Կալիկադոնսի բերանէն քիչ մը հարաւ: (Garstang, p. 44 n. 1, p. 183-4).

Թէ ինչու Հատեան արձանագրութիւնները Կիլիկիա անուան վրայէն լուծեամբ կ'անցնին, պատճառը գուցէ սա է որ երբ Ն. Բ. 1400 էն հետէ Խետացիք դէպի հարաւային Տաւրոս ծաւալիլ սկսան, հոն իրենց ամէնէն յամառ դիմադրութիւնն ընողները Կիլիկիցիք էին: Կիլիկիա թէև սկզբնապէս մի քանի իշխանութիւններու բաժնուած, սակայն արեւելքէն և հիւ-

սիսէն բնական սահմաններով անջատուած ըլլալուն, Սիւրիոյ վրայ Եգիպտական տիրապետութեան ամբողջ շրջանին կ'երեւի թէ բոլորովին անկախ կացութիւն մ'ունէր ոչ միայն Եգիպտացիներէն, այլ նաև Խետացիներէն: Երբ Խետացիք վերջապէս յաջողեցան նուաճել Կիլիկեան ցեղերը, ջնջեցին անոնց իշխանութիւնները, զօրաւոր Հատեան գաղութներ հաստատեցին անոնց երկրին զանազան մասերուն մէջ, թանաւանդ Ապառաժոտ Կիլիկիա, և իրենց լեզուն ու մշակոյթը պարտադրեցին անոնց, երկրին համար ալ Արծաւա պաշտօնական անունը թրդեգրելով:

Խետական մեծ կայսրութեան շրջանին և անոր գերիշխանութեան ներքեւ Կիլիկիա հզօրապէս ենթարկուեցաւ Հատեան քաղաքակրթութեան ազդեցութեանը, ու թէև Տարսոնը բացառութիւն համարելով Դաշտային Կիլիկիոյ մէջ մինչեւ հիմա Հատեան յիշատակարաններ չեն գտնուած. սակայն Տաւրոսական ու Անտիտաւրոսեան գաւառները շատ հարթուտ են անոնց կողմանէ. և սակէ գատ, ինչպէս Ենսէն դիտել կուտայ, դասական ժամանակի Կիլիկեան անձի անուններուն մէջ չատ յաճախագէպ են Խետական անուններ: Թաւրոս ժոյ անունով ածանցուած: Ապառաժոտ Կիլիկիա մասն, այժմու Սէլէֆքէի կամ Իշէլի սանճագը, շատ հին օրերէն ի վեր Յունաց ծանօթ էր Կետիս (Ketis) անունով, իսկ բնակչով թիւնը՝ Կետացիք (Ketioi), ինչ որ կը ցուցնէ թէ այդ երկրամասին ժողովուրդը շատ կանոնախէն հոծ մեծամասնութեամբ Խետական արիւնէ եղած է: Թերեւս Արծաւայի թագաւորութեան բուն կեդրոնն ալ հոն էր: Խետացիք ապա ատկից դէպի հարաւ՝ ծովէն անդին Կիպրոս ալ պաղթած են, Կիսիոն քաղաքին անունը և Հին Կոսկարան մէջ ամբողջ կղզիին

տրուած Բիքթիւն կոչուած խեղամեղ
ազգէն յիշատակներն են:

Բայց Տաւրոսի ու Անտիտաւրոսի
զառիթափներուն վրայ բուն Կիլիկեան
ցեղերը բնաջնջուած չէին, ուստի Փոքր
Ասիոյ կեդրոնական մասին մէջ Թրա-
կոսիոյ կիլիկեան ցեղերու հեղեղին առ-
ջն խեղամեղ մեծ կայսրութեան կոր-
ծանուելէն ետքը, Կիլիկեան ազգու-
թիւնը ինքզինքը ամփոփեց ու արժե-
քուց: Նոր կայսրութիւն մը կազմուե-
ցաւ, որուն կեդրոնը այլեւս արեւմա-
տեան Կիլիկիոյ էր՝ Պորի և Նիկաէի կող-
մերը: Ինչպէս Սէյս, Կարսթանկ և
ուրիշներ մատնանիչ կ'ընէին, սոյն
երկրորդ կայսրութիւնն ալ, իր մնա-
ցորդ յիշատակներէն դատելով, խեղա-
կան տիպ ունէր՝ կրօնքով, քաղաքա-
կան կազմակերպութեամբ և քաղաքա-
կերթական ու գեղարուեստական տե-
սակէտներէ, թերեւս գրական լեզուով
ալ, բայց հաւանօրէն ոչ ցեղով: Ար-
տաքնապէս Հատեան մշակոյթով, բայց
ներքնապէս Կիլիկեան ժողովուրդին
ոյժին վրայ կոթնած կայսրութիւն մըն
էր ան: Սալինոս հին Յոյն աշխարհա-
գիրը Միլետացի Հիկատէոսէ քաղելով
խիստ հետաքրքրական յիշատակու-
թիւն մը կ'ընէ թէ ԺԱ. դարուն (Ն. Բ.)
Կիլիկեան մեծ կայսրութիւն մը կար, որ
մէկ կողմէն Լիւքիան ու Պամփիլիան
կը պարփակէր, իսկ միւս կողմէն մին-
չեւ Հայաստան ու մինչեւ Եգիպտոս-
աց սահմանները կը տարածուէր: Ե-
թէ Սալինոսի տուած այս ընդարձակու-
թիւնը չափազանց ալ դատուի, սա-
կայն անտարակուսելի է Կիլիկիան՝ ամ-
բողջ տարածութեամբը՝ բովանդակող և
մէկ դար տեւողութեամբ այսպիսի ան-
կախ ու հզօր թագաւորութեան մը գո-
յութիւնը:

Այս Կիլիկեան կայսրութիւնն ար-
դէն քայքայուելու վրայ կ'երեւի երբ
Ն. Բ. 1010 ի տեսները Ասորեստանի

Թագաւոր Կալաթաւաար Ա. Թագաւորն իր
աշխարհակալութիւնները տարածեց
Մալաթիայէ սկսեալ արեւելեան Տաւ-
րոսի լեռնագագառներուն վրայ: Այ-
նուհետեւ Ապառաժուտ Կիլիկիոյ ծովե-
զերքը և Դաշտային Կիլիկիան ինկան
նախ Լիւքիական ցեղէ և աւելի վերջը
Աքայեան ցեղէ ծովահէններու իշխա-
նութեան տակ, սակայն բուն Լեռնային
Կիլիկիան շարունակեց իր անկախ գո-
յութիւնը և կեղծ-Հատեան մշակոյթը:
Կիլիկիոյ այս մասը Ասորեստանեայց
բեւեռագիր արձանագրութիւններուն
մէջ խիստ կիւ կամ խիստ անուշով կը
յիշուի, և կ'երեւի թէ այդ դարերուն
զուտ Կիլիկներէ բնակեալ էր: Անկախ
քաղաքական ասպարէզին վրայ երեւան
կ'ուզայ առաջին անգամ խիստ ան-
ուշամբ Սալմոնազար Բ. ի օրով (Ն. Բ.
858 թուականին), երբ Ասորեստանի
նոյն թագաւորին զինադրող երկրորդ
մեծ նիգալակցութեան անդամներէն
մէկն էր խիստ անկախ Պիսիտիւս թագաւորը:
Թէ և այդ նիգալակցութիւնը Որոնտէսի
ստորին ափանց վրայ ջախջախուեցաւ,
սակայն Ասորեստանցին ոչ ուրեք կ'ը-
սէ թէ խիստ անկախ ալ նուաճեց: Այս-
պէս այդ ոչ-անկախութեամբ թագաւորու-
թիւնը պահպանեց իր անկախութիւնը
գեւ կէս դարէ աւելի ալ մինչև Սարգո-
նի գահակալութիւնը (Ն. Բ. 721): Կի-
լիկիոյ այս մասն ամէնէն հարուստն էր
նաեւ հանքային արտադրութեանց, մա-
նաւանդ սկիւթի կողմանէ:

Միեւնոյն ժամանակ դաշտային Կի-
լիկիան Կուէ անունով գաղթաւորու-
թիւն մըն էր, որուն վրայ ալ Սալմո-
նաար Բ. մի քանի արշաւանքները
բաւ: Բայց աւելի լաւ է Ասորեստան-
եայց օրով Կիլիկիոյ պատմութիւնն
ուրիշ յօդուածով մը առանձին ուսում-
նասիրութեան նիւթ ընել:

Քէսապ.

ԵՂԻԱ Ս. ՔԱՍՍԱՆԻ

Հոկտ. 19, 1931.

փորձառութիւն ունեցած էր: Երեսուն տարի իր բոլոր շահագրգռութիւնը և ջանքերը Մարաշի Աստուածաբանական Ճեմարանին յատկացուց: Անիկայ շարունակ կը պայքարէր ապառաջութեան դէմ, որ զինքը կ'ատիպէր դասերը դադրեցնելու, նոյնիսկ երբեմն չաբսթնեներով Մարաշէն հեռանալու: 1895ի ջարդին ան Մարաշ կը գտնուէր, անիկայ ականատես հղաւ Ճեմարանի շէնքերուն հրդեհումին և կարգ մը ուսանողներու սպաննումին: Իր միսիոնարական կեանքին մէջ երկու անգամ իր ընտանեկան րոյնը քանդուեցաւ՝ ընտանիքին մօրը մեռնելովը: Եւ ինչ որ իրեն աւելի յուսախաբութիւն պատճառած էր իր վերջին արձակուրդէն ետքը Թուրքիա վերադառնալու անկարողութիւնն էր:

Մարաշ 50—60 հազար բնակիչներով քաղաք մըն էր, և միսիոնարական դաշտի կեդրոն մըն էր, որուն կապուած էին որոշ թիւով երկրորդ կարգէ շրջաններ: Տր. Լի շատ ընելիք ունէր, այնպիսի գործեր զոր ունէ միսիոնար մը ընելու կոչուած է: Այս գործունէութեանց վրայ իր մասնաւոր զրոյշմը ձգեց: Մարաշի մէջ երեք եկեղեցիներ կային, ուր ան յաճախ կը խօսէր կամ Ս. Դրքի դասաբանի մը դաս կուտար: Մարաշի Մանչերու Ակադեմիային տընօրէնն էր, Կ. Թ. Աղջկանց Գոլէճի վարչութեան սովորաբար կը մասնակցէր. Աւետ. Շրջանային Վարչութեան (Station Committee) մշտական անդամը և յաճախ ատենապետն էր: Աւետ. Շրջանին հաշիւները կը պահէր, քաղաքի մարդոց հետ ընթացիկ գործերու մասին յարաբերութիւններ ունէր: Կառավարական գործերով և կալուածական հարցերով կ'զբաղէր: Այնթապի Գոլէճին Վարչութեան յաճախ և կարեւոր մէկ անդամն էր: Անիկայ կը մասնակցէր նաև ընդհանուր միսիոնարա-

կան գործին: Այս գործունէութեանց մէջ անոր ունեցած ազդեցութեան մասին գործակից մը սապէս գրած է:

«Տր. Լիի ազդեցութեան տակ զբաղուող ուսուցչի մը համար անկարելի է մէկ գիծի վրայ շարունակ գործել: Ան պէտք է նորմութուններ փորձէ, և մասնաւոր միշտ միտքը պէտք է արթուն պահէ:»

«Անիկայ միշտ իբր վարիչ և իբր գործադիր մեծ կարողութիւն ցոյց տուած է, և զիտէր թէ ինչպէ՞ս գործը բարձրագոյն չափանիշին համեմատ պահել պէտք էր:»

«Անոր ազդեցութիւնը զգալի էր քաղաքի գործի հրապարակին վրայ շատ ընդարձակ շրջանակով: Ամէն ոք զիտէր՝ թէ Տր. Լիի հետ յարաբերութեան մէջ մեծագոյն պարկեշտութիւն և բժախնդրութիւն կը պահանջուէին:»

Բայց Տր. Լիի գործունէութեան գլխաւոր գիծը կը կազմէ Մարաշի Աստուածաբանական Ճեմարանին իբր պետը իր ծառայութիւնը: Ամէն երեք տարին անգամ մը, Կեդրոնական Թուրքիոյ մէջ Աւետ. եկեղեցիներու հովուութեան պատրաստուիլ փափաքող՝ 12 էն պակաս կամ աւելի թիւով՝ երիտասարդներու խումբ մը կը հաւաքուէր, ուսանողական եռամիսյ անթերի դասընթացքի մը հետեւելու համար:

Պատահաբար Թուրքիոյ միսիոնարական ուրիշ մէկ դաշտէն ալ ուսանող մը կը գտնուէր: Պատահաբար Հայ Առաքելական ուսանող մը ևս կը գտնուէր քահանայութեան պատրաստուելու համար: Երեսուն տարուան միջոցին, այսպիսի տասը խումբեր միայն կարելի էր ունենալ:

Մասնաւոր պարագաներու տակ մասնակի յաւելուածական դասընթացքներ ալ կը պատրաստուէին, լման գոլէճական ուսումէ զուրկ ուսանողներու համար: Կանոնաւոր դասընթաց-

քը, սակայն, Գոլէճի աւսումնաւարտներու վերապահուած էր: Տր. Լիի մեծ ջանքն ու փափաքն էր հաստատութեան տատիճանը բարձր պահել իբր գոլէճական աւսումնաւարտներու զըպրոցը, և այս մասին թէ՛ միսիոնարները և թէ՛ տեղական եկեղեցիները իրեն թիկունք կ'ըլլային: Բոլոր կանոնաւոր աշակերտները պէտք էին Եբրայեցերէն, Յունարէն, փիլիսոփայութիւն, Մեկնաբանութիւն, Պատմութիւն, Բուն Աստուածաբանութիւն (Systemetics) և հովազիտութիւն ուսանիլ, ասկէ պակաս ուսումով մէկը պէտք չէր վկայական առնելու յոյսը ունենալ:

Ի՞նչ էր ասոր արդիւնքը: 12 անդամներէ բաղկացեալ՝ 1905 ին ուսումնաւարտ եղած՝ կարգի մը տեղեկագրութիւնն է հետեւեալը: Բոլորն ալ կեդրոնական Թուրքիոյ մէջ հովուական պաշտօն ստացան: Ասանցմէ չորսը 1906 ի Ատանայի ջարդին սպաննուեցան: Ուրիշ չորսը 1915 ի տարագրութեան

միջոցին մահացան, խաղաղ կամ անտանելի պայմաններու տակ: Մնացեալ չորսէն մէկը Հարաւային Ամերիկայէ, երկրորդը՝ առժամեայ հովիւն է Հալէպի էմմանուէլ Եկեղեցիին, 1500 հոգինոց ժողովուրդով, երրորդը՝ զրեթէ նոյնքան մեծ՝ Պէյրութ քէմփի Եկեղեցիին հովիւն է, և չորրորդը՝ Յունաստանի բոլոր Հայ Աւետ. եկեղեցիներուն ընդհանուր աւետարանիչը և վերահսկիչն է:

Ամէն Կիրակի Տր. Լիի ձեռնասուն աշակերտները կը քարոզեն Հալէպի երկու և Պէյրութի մէկ մեծ եկեղեցիներուն մէջ, Անտիոքի մօտ լեռնային դիւղերու եկեղեցիներուն մէջ, Դամասկոսի եւ Եմֆայի մէջ, Աթէնքի շրջանին եկեղեցիներուն մէջ, Պուէնոս Այրէսի, Կալիֆորնիայի, Թրոյի, Նիւ Եորքի, Քէմպրիճի, Մէսէչուսէցի մէջ. և անոնց միջոցաւ Տր. Լի տակաւին կը խօսի:

Ճ. Է. ՄԷՐԻՆ

(Շարունակելի)

ԿԻԼԻԿԻԱ ԱՆՈՒԱՆ ԵՄԳՈՒՄԸ

Գրեց՝ ՎԵՐ. Ե. ՔԱՍՈՒՆԻ

(Շար. և Վերջ)

Ջարմանալի է որ Կիլիկիա անունը չի պատահիր Հատեան մեծ կայսրութեան բեւեռագիր արձանագրութեանց մէջ մէկ անգամ իսկ, թէ և Տարսոն, Ատանա, Կոմանա և ուրիշ քաղաքներ կը յիշուին հոն: (Garstang, The Hittite Empire, p. 186 n. 3): Բայց ասկէ չի հետեւիր թէ Կիլիկիան արդէն Կիլիկիա հաստատուած չէին, այլ թէ Հատեանք, զույգ քաղաքական նշակատումներով, չէին ուզեր այդ անունը գործածել: Կարսթանկ, Պողազքէօյի արձանագրութեանց յայտնու-

թիւնները աւագիր քննութենէ մը անցունելով, սա եզրակացութեան կը յանգի թէ Կիլիկիա իր ամէնէն ընդարձակ տարածութիւնով մաս կը կազմէր, և իրօք կեդրոնական մասը, Հատեանք հարկատու մեծագոյն իշխանութիւններէն Արծաւայի թագաւորութեան. (ibid., pp. 13 63 182.): Արդ, Եգիպտոսի պատմական արձանագրութիւնները Փօքր Ասիոյ իշխաններու շարքին մէջ ընդհանրապէս խեղացող թագաւորէն անմիջապէս յետոյ Կոտէի երկրին իշխանը կը յիշեն. իսկ Պողազ-

քէօյի արձանագրութիւններէն կը տեսնենք որ Հատեան մեծ աւատականներուն մէջ առաջին տեղը Արծաւայի հարկատու թագաւորին կը պատկանի. որով հաւանականութիւնէ հեռու չէ կարծել թէ Արծաւայի երկիրը նոյն է Կոտէի երկրին կամ Կիլիկիոյ հետ: Այս կարծիքը հաստատող պարագայ մը սա է որ, ինչպէս թէլ—Ամարնայի բեւեռագիր պատճէններէն կարելի է տեսնել, Արծաւայի երկրին թագաւորը Տարխունտարտուշ բուն Հատեանց լեզուով նամակներ ալ գրած է Ամենովիր Գ. փարաւոնին: Եւ դարձեալ, Ռամսէս Բ. ի 45 երորդ տարին երբ Խետացւոյ մեծ թագաւորը Խատտուաիլ Գ., որ փարաւոնին աներն էր, Եգիպտոս իջաւ իր վեհաշուք փեսային այցելութիւն մը տալու, ըստ մեհենագիր արձանագրութեանց՝ անոր կ'ընկերանար Կոտէի (Կիլիկիոյ) հարկատու դաշնակից թագաւորն ալ, որ այսպէս չի կրնար Արծաւայի թագաւորէն տարբեր մէկը ըլլալ: Իսկ այս մասին վրձնական ապացոյցը մեզի տուող պարագայ մըն ալ աս է որ Մուսալլու Գ. Հատեան մեծ թագաւորին օրով՝ Արծաւայի թագաւորին ստորակարգեալ չորս գլխաւոր իշխաններէն մէկն է Աւաքշանտու (Աղեքսանդր), որու ոստանն էր Ույրուսա կղզեքաղաքը, որ է դասականաց երկուսն ալ Հայա-Կիլիկիոյ Կոռիկոսը, Կալիկադոնոսի բերանէն քիչ մը հարաւ: (Garstang, p. 44 n. 1, p. 183-4).

Թէ ինչու Հատեան արձանագրութիւնները Կիլիկիա անուան վրայէն լռութեամբ կ'անցնին, պատճառը գուցէ սա է որ երբ Ն. Բ. 1400 էն հետէ Խետացիք գէպի հարաւային Տաւրոս ծաւալի սկսան, հոն իրենց ամէնէն յամառ դիմադրութիւնն ընդունելը Կիլիկիոյէն էին: Կիլիկիա թէն սկզբնապէս մի քանի իշխանութիւններու բաժնուած, սակայն արեւելքէն և հիւ-

սիսէն բնական սահմաններով անջատուած ըլլալուն, Միւրիոյ վրայ Եգիպտական տիրապետութեան ամբողջ շրջանին կ'երեւի թէ բոլորովին անկախ կացութիւն մ'ունէր ոչ միայն Եգիպտացիներէն, այլ նաեւ Խետացիներէն: Երբ Խետացիք վերջապէս յաջողեցան նուաճել Կիլիկիան ցեղերը, ջնջեցին անոնց իշխանութիւնները, զօրաւոր Հատեան գաղութներ հաստատեցին անոնց երկրին զանազան մասերուն մէջ, մանաւանդ Ապառաժուտ Կիլիկիա, և իրենց լեզուն ու մշակոյթը պարտադրեցին անոնց, երկրին համար ալ Արծաւա պաշտօնական անունը օրգեցրելով:

Խետական մեծ կայսրութեան շրջանին և անոր գերիշխանութեան ներքեւ Կիլիկիա հզօրապէս ենթարկուեցաւ Հատեան քաղաքակրթութեան ազդեցութեանը, ու թէն Տաւրոնը բացառութիւն համարելով Դաշտային Կիլիկիոյ մէջ մինչեւ հիմա Հատեան յիշատակարաններ չեն գտնուած. սակայն Տաւրոսական ու Անտիտաւրոսեան զաւառները շատ հարուստ են անոնց կողմանէ. և ասկէ զատ, ինչպէս Ենսէն դիտել կուտայ, դասական ժամանակի Կիլիկիան անձի անուններուն մէջ չստյաճախադէպ են Խետական անուններու տիպով անուններ՝ Տարխու աստուծոյ անունով ածանցուած: Ապառաժուտ Կիլիկիա մասն, այժմու Սէլէֆքէի կամ Իչէլի սանճագը, շատ հին օրերէն ի վեր Յունաց ծանօթ էր Կետիս (Ketis) անունով, իսկ բնակչութիւնը՝ Կետիօի (Ketioi), ինչ որ կը ցուցնէ թէ այդ երկրամասին ժողովուրդը շատ կանուխէն հոծ մեծամասնութեամբ Խետական արիւնէ եղած է: Թերեւս Արծաւայի թագաւորութեան բուն կեդրոնն ալ հոն էր: Խետացիք ապա ատկից գէպի հարաւ՝ ծովէն անդին Կիպրոս ալ գաղթած են, Կիսիոն քաղաքին անունը և Հին Կոսկարան մէջ ամբողջ կղզին

տրուած Քիթթիւն կոչումը խեղաճեց
աղգէն յիշատակներն հն։

Բայց Տաւրոսի ու Անտիտաւրոսի
զառիթափներուն վրայ բուն Կիլիկիան
ցեղերը բնաջնջուած չէին, ուստի Փոքր
Ասիոյ կեդրոնական մասին մէջ Թրա-
կոփոխեցիական ցեղերու հեղեղին առ-
ջն խեղաճեց մեծ կայսրութեան կոր-
ծանուելէն ետքը, Կիլիկիան աղգու-
թիւնը ինքզինքը ամփոփեց ու արժե-
ցուց։ Նոր կայսրութիւն մը կազմուե-
ցաւ, որուն կեդրոնը այլեւս արեւմտե-
կան Կիլիկիա էր՝ Պորի և Նիկոէի կող-
մերը։ Ինչպէս Սէյս, Կարսթանկ և
ուրիշներ մատնանի իրենցին, սոյն
երկրորդ կայսրութիւնն ալ, իր միա-
ցորդ յիշատակներէն դատելով, խեղա-
կան տիպ ունէր՝ կրօնքով, քաղաքա-
կան կազմակերպութեամբ և քաղաքա-
կըրթական ու գեղարուեստական տե-
սակէտներէ, թերեւս գրական լեզուով
ալ, բայց հաւանօրէն ոչ ցեղով։ Ար-
տաքնապէս Հատեան մշակոյթով, բայց
ներքնապէս Կիլիկիան ժողովուրդին
ոյժին վրայ կոթնած կայսրութիւն մըն
էր ան։ Սալինոս հին Յոյն աշխարհա-
գիրը Միլետացի Հիկատէոսէ քաղիւծ
խիստ հետաքրքրական յիշատակու-
թիւն մը կ'ընէ թէ ՓԱ. դարուն (Ն. Ք.)
Կիլիկիան մեծ կայսրութիւն մը կար, որ
մէկ կողմէն Լիւդիան ու Պամփիլիան
կը պարփակէր, իսկ միւս կողմէն մին-
չեւ Հայաստան ու մինչեւ Եգիպտոս-
ոց սահմանները կը տարածուէր։ Ե-
թէ Սալինոսի տուած այս ընդարձակու-
թիւնը չափազանց ալ դատուի, սա-
կայն անտարակուսելի է Կիլիկիան՝ ամ-
բողջ տարածութեամբը՝ բովանդակող և
մէկ դար տեւողութեամբ այսպիսի ան-
կախ ու հզօր թագաւորութեան մը գո-
յութիւնը։

Այս Կիլիկիան կայսրութիւնն ար-
դէն քայքայուելու վրայ կ'երևի երբ
Ն. Ք. 1010 ի տառնները Ասորեստանի

Թագաւոր Թագաւորն իր
աշխարհակալութիւնները տարածեց՝
Մալաթիայէ սկսեալ արեւելեան Տաւ-
րոսի լեռնագագառներուն վրայ։ Սյ-
նուհետեւ Ապամաժուտ Կիլիկիոյ ծովե-
զերքը և Դաշտային Կիլիկիան ինկան
նախ Լիւգիական ցեղէ և աւելի վերջը
Աքայեան ցեղէ ծովահէններու իշխա-
նութեան տակ, սակայն բուն Լեռնային
Կիլիկիան շարունակեց իր անկախ գո-
յութիւնը և կեղծ-Հատեան մշակոյթը։
Կիլիկիոյ այս մասը Ասորեստանեայց
բեւեռագիր արձանագրութիւններուն
մէջ Խիլակի կամ Խիլակու անուանով կը
յիշուի, և կ'երևի թէ այդ դարերուն
զուտ Կիլիկներէ բնակեալ էր։ Անկախ
քաղաքական ասպարէզին վրայ երեւան
կ'ուզայ առաջին անգամ Խիլակու ան-
ուամբ՝ Սալմանապար Բ. ի օրով (Ն. Ք.
858 թուականին), երբ Ասորեստանի
նոյն թագաւորին զինադրող երկրորդ
մեծ նիզակակցութեան անդամներէն
մէկն էր Խիլակայի Պիլիթիլ թագաւորը։
Թէև այդ նիզակակցութիւնը Ուրմաէսի
ստորին ամանց վրայ ջախջախուեցաւ,
սակայն Ասորեստանցին ոչ ուրեք կ'ը-
նէ թէ Խիլակուին ալ նուաճեց։ Այս-
պէս այդ աշխարհաբոյր թագաւորու-
թիւնը պահպանեց իր անկախութիւնը
գեւ կէս դարէ աւելի ալ մինչև Սարգո-
նի դահակալութիւնը (Ն. Ք. 721)։ Կի-
լիկիոյ այս մասն ամէնէն հարուստն էր
նաեւ հանքային արտադրութեանց, մա-
նաւանդ արծաթի կողմանէ։

Միեւնոյն ժամանակ դաշտային Կի-
լիկիան Կուէանուիով զտր թագաւորու-
թիւն մըն էր, որուն վրայ ալ Սալմա-
նապար Բ. մի քանի արշաւանքները
բաւ։ Բայց աւելի լաւ է Ասորեստանե-
այց օրով Կիլիկիոյ պատմութիւնն
ուրիշ յօդուածով մը առանձին ուսում-
նասիրութեան նիւթ ընել։

Քէտապ.

ԵՂԻՍ. Ս. ՔԱՍՈՒՆԻ

Հոկտ. 19, 1931.

ՐԷՄՁԻ ՄԷՔՏՈՆԱԼՏ

Գրեց՝ ՎԵՐ. Կ. Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

(Եւր. Ասխորդ քիւհն եւ վերջ)

Պատերազմը վերջացաւ։ Աշխատաւորականները իրենց տեղերը դարձան։ Բոսիայէն մեծ վտանգ մը երեւան եկաւ։ Պօլշէվիկութիւնը Անգլիայ մէջ մուտք կը գտնէր։ Մէքստոնալտի նոր գործ մը բացուեցաւ։ Երկրին սահմանադրական սկզբունքները վտանգի մէջ էին։ Նա բոլոր ոյժովը այս թշնամիին դէմ մաքառեցաւ, իր կուսակցութեան մարդերը ծայրայեղ քայլեր առնէլէ աւելտեց։ Երկիրը նորէն տեսաւ թէ Մէքստոնալտ ճշմարիտ հայրենասէր մ'է։ Աշխատաւորականներ՝ շնորհիւ Մէքստոնալտի ջանքերուն՝ 1924 ի ընտրութիւններուն, փարլամէնթի մէջ 191 աթոռ գրաւեցին։ Հետեւաբար Ճորճ Ե. Թագաւոր Մէքստոնալտի յանձնեց դահլիճը կազմելու պաշտօնը։

Նա վարչապետութիւնը և արտաքին գործոց նախարարութիւնը միասին վարեց։ Իր մէկ կարեւոր գործը եղաւ Գերմանիոյ և Ֆրանսայի մէջտեղ պատերազմական տուգանքի կնճոտտ խընդիրը լուծել։ Խնդիր մը՝ որ երկու տէրութեանց միջեւ խաղաղութիւնը վըրդովելու կ'սպառնար։ Սակայն այս անգամ Մէքստոնալտի կառավարութեան տեւողութիւնը կարճ եղաւ։ Թերթերը նամակ մը հրատարակեցին իրր թէ Անգլիոյ Աշխատաւորականներուն եւ Ռուսիոյ մէջ դադարուկ հասկացողութիւն մը եղած է։ Ամբողջ երկրին մէջ մեծ գրգռութիւն եղաւ։ Աշխատաւորականներուն հակառակ քուէ տուին եւ Մէքստոնալտի կառավարութիւնը տապալեցաւ։ Անգլիոյ ժողովուրդը գործադուլ ցուցաւ թէ համայնավարութիւնը

իրենց երկրին մէջ արմատ չի կրնար ձգել։ Եւ այնպէս կարծուեցաւ թէ Մէքստոնալտ քսան տարիէն իր ինկած տեղէն չի կրնար շարժիլ։ Սակայն Անգլիացիք իրենց Րէմզի Մէքստոնալտը դեռ չէին ճանչցած։ 1926 և 1929 ին դահլիճը կազմելու գործը նորէն Մէքստոնալտի յանձնուեցաւ։ Յիշեալ թուականներէն ասդին Մեծն Բրիտանիան մեծ ճգնաժամեր անցուց։ Այս ժամաւ նակամիջոցին Մր. Մէքստոնալտի կատարած մեծ քաղաքական գործերէն մի քանին յիշենք։

Նախագահ Հուվըրի հետ տեսակցութիւնը մարտանաւերու զեղջման խընդիրը։ Դարերէ իվեր Անգլիա իր նաւային ոյժով կը հպարտանայ։ Իրեն համար սուրբ և անփոփոխելի սկզբունքըրած է թէ իր մարտանաւերուն թիւը և անոնց ոյժը ուրիշ ոեւէ տէրութեան ծովային ոյժը պէտք է գերազանցէ, որպէս զի միշտ ինքը ըլլայ ծովերու թագուհին։ Անգին նոյնպէս անգլիախոս, իրեն չափ՝ Թերեւս իրմէ ալ հարուստ՝ ուրիշ մեծ տէրութիւն ալ կայ։ Ինչպէս լեզուով նոյնպէս ծագումով, կրօնքով և ուրիշ շատ տեսակէտներով իրեն քոյր տէրութիւն մ'է։ Ան ալ Մեծն Բրիտանիոյ չափ մարտանաւեր կրնայ չիւնել։ Արդէն անոնք իրենց հետ մրցիլ սկսած և հաւասարած են։ Այս մրցումին ծայրը ո՞ւր պիտի հասնի։ Երկուքն ալ ի՞նչ հաղթին ծախսեր կ'ընեն մարտանաւեր շինելու համար։ Իրենց ժողովուրդներուն վրայ ի՞նչ ծանր բեռեր կը դնեն։ Մէքստոնալտ խորհեցաւ որ ասիկայ երկու տէրութեանց համար ալ պէտք է,

յիմարութիւն է: Եղբայրութեան հոգիին հակառակ է: Ուստի ելաւ Ամհրիգա գնաց: Հուլիսի հետ իբրեւ եղբայր կառավարիչներ միասին խորհրդակցեցան, կասկած չունիմ աղօթեցին, հասկացողութեան եկան: Մրցումին սահման դրին, ուրախութեամբ իրարմէ բաժնեւեցան: Եւ մեծ Անգլիացին սրտի խաղաղութեամբ հայրենիք վերադարձաւ: Այսպէս՝ այս երկու մարդիկ Փետրուարին գումարուելիք գինացեղման ժողովին հիմնաքարը դրին: Մէքտոնալտի ըրածը բարոյական քաջութիւն և քաղաքական իմաստութիւն էր:

Գերմանիան և Աւստրիան արագաքայլ դէպ ի սնանկութեան կ'երթային. և եթէ այդ չարիքին դարման մը չէր գտնուէր ամբողջ աշխարհը չփոթութեան պիտի մատնուէր: Մէքտոնալտ կերպով մը անոնց օգնեց և ընդհանուր աղէտը արգելեց:

Բրիտանիոյ կայսրութեան պատմութեան մէջ անմոռանալի դէպք մը՝ Մէքտոնալտի անունը անմահացուց: Ինքը ամառուան արձակուրդի գացած էր: Հազիւ երկու շաբաթ անցած էր, երբ իրեն հեռագրուեցաւ թէ օտար երկիրներու դրամատէրները իրենց ոսկիները Լոնտոնի դրամատոնէն կը քաշեն և դրամատոնը իր դարաւոր պատիւը կորսնցնելու վտանգի մէջ է: Ծշմարիտ Անգլիացի մը այս աղէտին չէր կրնար դիմանալ: Անմիջապէս Լոնտոն վերադարձաւ: Միւս ընկերները իրենց գրտնուած տեղերէն ետ կանչեց: Ժողով գումարեց և ըսաւ թէ, երկիրը տնտեսական տագնապէ ապստեղու մէկ ճամբայ կայ, ոչ թէ կուսակցական այլ ազգային կառավարութիւն մը կազմել: Իր աշխատաւորական ընկերները ասոր հակառակեցան: Սակայն՝ Մէքտոնալտ իր որոշումին վրայ հաստատ մնաց: Ընկերները զինքը լքեցին, ինքն ալ իր սիրած եւ անոր համար տարիներով ան-

խոնջ աշխատած կուսակցութենէն բաժնուեցաւ: Հակառակ իբրեւ դաւաճան պախարակուելուն, գնաց իր միտքը պահպանողական պետերուն յայտնեց և շորճ թափաւորին դիմեց: Անոր հայրենասիրութեան եւ անկեղծութեան և եռանդին վստահելով՝ Պոլտունի պէս պահպանողականներ իրեն նեցուկ ըլլալու խօսք տուին: Հետեւաբար նոր կառավարութիւնը կազմելու գործը նորէն իրեն յանձնուեցաւ: Նոր ընտրութիւն կատարուեցաւ: Ամբողջ երկիրը կացութեան տեղեակ եղաւ: Անգլիացին նորէն ցուցուց թէ իրենք հայրենիքին շահը ամէն կուսակցական շահերէն վեր կը բռնեն, եւ անոր զիկը, առանց անձնական և կուսակցական նկատումներու, վստահելի անձերու յանձնելը գիտին: Բուէն՝ ահագին մեծամասնութեամբ ազգային կառավարութեան ի նպաստ տրուեցաւ, եւ այսպէս խառն եւ զօրաւոր կառավարութիւն մը կազմուեցաւ: Այսնոր կառավարութիւնը անմիջապէս գործի սկսելով, երկիրը անօգուտ փոստերէն ապստեղու եւ հասոյթի նոր աղբիւր գտնելու ձեռնարկեց: Տօլ ըսուած դրութիւնով կառավարութենէն շաբաթական գումար մը առնող ծոյլ անգործներու թիւը, միջին հաշուով վերեթէ մէկ տասներորդին իջեցուցին: Սթերլինի արժէքը պակսեցնելով և կերակուրի, հագուստի և այլ պէտքերուն իւթերուն գինը նոյնը պահելով ժողովուրդին ապրուստը զիւրացուցին, ուրիշ երկիրներէն անգլիական ապրանքներու ապսպրանքը մեծ թափով յառաջ գնաց: Արտածումի նոր ապրանքներ չինելու համար գործարանները սկսան նոր թափով գործել. անգործներու թիւը պակսեցան և երկրի վարկը բարձրացաւ: Մեծն Բրիտանիոյ պատիւը և ամբողջ աշխարհի վաճառականութեան կեդրոնը ճանչցուած Անգլիական դրամատոնը մեծ աղէտէ մը ապստեղաւ:

Այս ամէնը եղան, վասն զի տէրութեան ղեկը ձեռք առնող Բէմլի Մէքստոնալտ ամէնուն կողմէ ճանչցուած է իբր անձնական և փարթիական նկատումներէ ազատ, իմաստուն, անձնուէր, քաջ հայրենասէր և ՎՍՍՍՀԵԼԻ անձնաւորութիւն մը: Երանի՜ թէ բոլոր հայեր, աշխարհականներ, հոգեւորներ և մտաւորականներ այս աշխարհական առաջնորդէն բաներ մը սորվէին:

* *

Երրորդ՝ Բիւզի Միքսոնալտ իբր խօսող և գրող մարդ: Լեզուն յստակ, կերպը գրաւիչ, խորհուրդները հասուն, ձայնը անուշ, կեցուածքը գեղեցիկ, ունկնդիրներուն հետ կարեկից հազուագիւտ խօսող մըն է: Նաեւ անոր զբոսածքը կարգաւ իրական հաճոյք մըն է: Բնութիւնը կը սիրէ. ծաղիկներու, բոյսերու, թռչուններու, ձուկերու, չորքոտանիներու մասին ըրած պատմութիւնները լսելէն մարդ բնաւ չի ձանձրանար: Իր տունը, պարտէզը, ընտանիքը շատ կը սիրէ: Իրեններուն մէջ տեղը, շերմակ պալատը պաշտօնին գլուխը, մեծ անձնաւորութիւններով շրջապատուած և մեծ պատիւներով տղողուած, կամ հազարաւոր ունկնդիրներ ափ ի բերան զինք մտիկ ըրած ատեն նոյն հեղ, համեստ, անկեղծ եւ յարգելի մարդը կը տեսնես, նաեւ ճշմարիտ բարեկամ և ընկերը: Անոր մեծութիւնը խոնարհութեան, ծառայելու հոգիին մէջն է: Այժմ վաթսուներեք տարեկան է, սակայն երիտասարդի մը չափ զուարթագէտ, խաղը և զբօսանքը սիրող, ընկերային յարաբերութիւնները յարգող և վայելող մըն է: Կարգաւ շատ կը սիրէ: Ծօխ և ընտիր հատորներով լեցուն գրադարանին մէջ կարգաւոր և գրելով գրադած ժամերը իրեն համար շատ թանկագին են: Ահա այս է մեծ ազգին այս օրուան մեծ նախարարապետը:

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՆՈՒԿ

Անգլիոյ մէջ Cunarder «534» անունը շոգենաւ մը կը շինուի որուն նմանը տակաւին աշխարհ տեսած չէ: Շոգենաւին երկայնութիւնը 1018 ոտք է և կ'արժէ երեսուն միլիոն տոլար: Այս շոգենաւը մասնաւորապէս կը շինուի Գերմանիոյ նաւային ուժը տկարացնելու համար: Ասոր ծաւալը 7, 300,000 խորանարդ ոտք է և կրնայ 73,000 թօնօ ապրանք փոխադրել: Կամրջակը 650 ոտք երկայնութիւն ունի:

Ովկիանոսին վրայէն հազարն արագութեամբ նա պիտի սուրայ ժամը 40.5 մղոն և Ազլանդեանը պիտի կրնայ կըտրել անցնել 90 ժամուայ մէջ: Հաւանական է որ Հասարակածի շրջանը 25.9 օրէն ընէ: Այս շոգենաւը զարդարելու համար 2,500,000 տոլար պէտք է: Տասը մղոն կապերտ հազիւ պիտի բաւէ անոր սենեակները ծածկելու: Երեսը հազար ելեկտրական լամպաներ պէտք պիտի ըլլան զայն լուսաւորելու: Նաեւ լսելը կը կշռէ 100 թօնօ, և 300էն աւելի մօթօրներ անոր ելեկտրականութիւն պիտի արտադրեն: Ասկէ զատ կրօնական պաշտամունքի համար առանձին մատուռ մը պիտի ունենայ: Իրարու վրայ աստիճանաբար ունի տասը կամրջակներ: Թէնիս և կոլֆ (գնդակախաղ) խաղալու համար մասնաւոր կերպով շինուած գիւղիկներ ունի: Կամրջակներէն ոմանք գեղեցիկ պարտէզներ պիտի ունենան, արանք մէջ պիտի գտնուին լողալու համար առաջաններ:

Այս վիթխարի շոգենաւը աշխարհի միայն մեծ և նշանաւոր նաւահանգիստները պիտի կրնայ խաբիսի գնել: 1933 ին, Հոկ. ամսուն, ծով պիտի իջնէ այս նաւը, որ թեթև հաբիւր նաւակներ կը

պարունակէ պէտք եղած տառն: Իբր կամրջակներուն վրայ 50,000 մարդ կրնայ հանգիստ կերպով զետեղուիլ: Տակաւին որոշ անուն մը չունի, սակայն հաւանական է որ Բիւնարտիա, Վիկտորիա և կամ Բրիտանիա դրօշաւներ անունը: Անգլիա, աշխարհի մէջ տակաւին չկառուցուած և չտեսնուած շողենաւը կը պատրաստէ, սրպէսզի աշխարհ գիտնայ թէ՛ ինքն է որ կ'իշխէ ծովերու և օվկիանոսներու վրայ:

Միջագետքի մէջ պեղումներ կատարուեցան վերջերս և երեւան ելան ջրհեղեղի հետքերը նոյն նահապետի ժամանակէն մնացած: Խորունկ գետին տակը ընդարձակ տարածութեամբ և խորնկութեամբ տիղմ երեւան ելած է: Տիղմին թէ մակերեսը և թէ յատակը տնական և ուրիշ տեսակ գործիքներ գտնուած են: Ասորեստանեան ցեղէն մնացած պնակիտներ ալ (tablets) հանուած են արոնք ջրհեղեղի պատմութիւնը կ'աւանդեն:

Մասնաւոր ելեկտրական լամպաներ կան՝ որոնք արեւեստական արեղազնային ճառագայթ կուտան անդամանիշակագոյն լոյսի ձեւով: Հաւերը այս ելեկտրական ճառագայթներուն ենթարկուելով թէ՛ որակով և թէ՛ քանակով աւելի գոհացուցիչ հաւկիթներ յառաջ եկած են: Հաւկիթներուն թիւը, մեծութիւնը և ծանրութիւնը աւելցած է: Խումբ մը հաւերը որոնք մէկ ամիս այս լոյսին ենթարկուած էին 888 հաւկիթներ աւելի անոնց քան նոյն թիւով ուրիշ խումբ մը հաւերէ՝ որ ելեկտրական հոսանքի ենթարկուած չէին: Այս հաւկիթները աւելի հարուստ են կենսամին Գ ով, և անոնց վառահանիւրը աւելի առողջ և զօրաւոր կ'ըլլան:

Բիմիաբաններ Լոնտոնի կազ արտադրող ընկերութեան աշխատանքին

մէջ պարապած ժամանակ, կրցան նոր կերպ մը գտնել բուժելու համար յօդացաւի հիւանդութիւնը և նոր թոքախտի բուժուած հիւանդները: Ստոնք կը բուժուին հանքածուխի կազէն արտադրուած անդամանիշակագոյն և ենթակարմիր ճառագայթներով որոնք բուժիչ յատկութիւններ ունին: Ուռած յօդերը և քրոնիկ յօդացաւը այս կերպով բուժուած են:

Մարդկային պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով ակոյաի փտութիւնը արդիւնէւումիջոցը պատուած է: Փրօֆէսոր Մըքօլլըմ իր տասը տարուան անասուններու վրայ կատարած փորձերէն վերջ կրցաւ վերջապէս յաջողիլ: Ծանօթ է որ բերնին մէջ վիտամին D-ի քիմիական միջոցներ յառաջ կը բերեն ակոյաի փտութիւնը: Միքրոպիներու այս ագրեցութիւնը կը չէզոքացուի լորձուէքի միջոցաւ: Լորձուէքը այս չէզոքացուցիչ կարողութիւնը կ'ունենայ երբ ան իր մէջ պարունակէ պէտք եղած չափով կիր (calcium), փոսփոր (phosphorus) և կենսամին Գ (Vitamin D): Լորձուէքը այս տարրերը կ'ստանայ արիւնէն: Իսկ որպէսզի արիւնը այս նիւթերը պարունակէ մենք պէտք է զանոնք պարունակող սնունդ տանենք: Կենսամին Գ կ'ստանանք արիւնէ կամ ձկան իւղէ, հաւկիթի դեղնուցէ, կարագէ և կաթէ: Առատ կիր պարունակող սնունդներն են կաթ, հաւկիթ, ջրոտ կանաչեղէնք՝ մասնաւորապէս սպանախ, հազար, կաղամբ, և որոշ չափով ալ միրգերը: Փոսփոր պարունակող սնունդներն են, կաթ, հաւկիթ, ֆասուլիա, ոլոռն եւ սիսեռ, արջառի միսը առանց իւղի:

Անգլիոյ մէջ ալքոլ պատրաստուեցաւ փայտի սղոցուքէն օր իրական ալքոլին ամէն յատկութիւններն ալ կը պարունակէ:

Քաղեց՝ Հ. ՓՈԼՍԵՍՆ

ՐԷՄՁԻ ՄԷՔՏՈՆԱԼՏ

Դրեց՝ ՎԵՐ. Կ. Յ. ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ

(Եւր. Ասխորդ քիւսէն եւ վերջ)

Պատերազմը վերջացաւ։ Աշխատաւորականները իրենց տեղերը դարձան։ Բուսիայէն մեծ վտանգ մը երեւան եկաւ։ Պօլշէվիկութիւնը Անգլիայ մէջ մուտք կը գտնէր։ Մէքտոնալտի նոր գործ մը բացուեցաւ։ Երկրին սահմանադրական սկզբունքները վտանգի մէջ էին։ Նա բոլոր այժմով այս թշնամիին դէմ մաքաւեցաւ, իր կուսակցութեան մարդերը ծայրայեղ քայլեր առնելէ ազատեց։ Երկիրը նորէն տուտաւ թէ Մէքտոնալտ ճշմարիտ հայրենասէր մ'է։ Աշխատաւորականներ՝ շնորհիւ Մէքտոնալտի ջանքերուն՝ 1924 ի ընտրութիւններուն, փարլամէնթի մէջ 191 անդամ դրաւեցին։ Հետեւաբար ճորճ Ե. Թազաւոր Մէքտոնալտի յանձնեց գահը ինքը կազմելու պաշտօնը։

Նա վարչապետութիւնը եւ արտաքին գործոց նախարարութիւնը միասին վարեց։ Իր մէկ կարեւոր գործը եղաւ Գերմանիոյ եւ Ֆրանսայի մէջ տեղ պատերազմական տուգանքի կնճոտտ խընդիրը լուծել։ Խնդիր մը՝ որ երկու տէրութեանց միջեւ խաղաղութիւնը վերդովելու կ'սպառնար։ Սակայն այս անգամ Մէքտոնալտի կառավարութեան տեղադրութիւնը կարճ եղաւ։ Թերթերը նամակ մը հրատարակեցին իրը թէ Անգլիայ Աշխատաւորականներուն եւ Ռուսիոյ մէջ գաղտուկ հասկացողութիւն մը եղած է։ Ամբողջ երկրին մէջ մեծ զրգոթութիւն եղաւ։ Աշխատաւորականներուն հակառակ քուէ տուին եւ Մէքտոնալտի կառավարութիւնը տապալեցաւ։ Անգլիոյ ժողովուրդը գործադուլ ցուցուց թէ համայնակարութիւնը

իրենց երկրին մէջ արմատ չի կրնար ձգել։ Եւ այնպէս կարծուեցաւ թէ Մէքտոնալտ քսան տարիէն իր ինկած տեղէն չի կրնար շարժիլ։ Սակայն Անգլիայիք իրենց Րէմզի Մէքտոնալտը դեռ չէին ճանչցած։ 1926 եւ 1929 ին գահընձը կազմելու գործը նորէն Մէքտոնալտի յանձնուեցաւ։ Յիշեալ թուականներէն ասդին Մեծն Բրիտանիան մեծ ճգնաժամեր անցուց։ Այս ժամանակամիջոցին Մր. Մէքտոնալտի կատարած մեծ քաղաքական գործերէն մի քանին յիշենք։

Նախագահ Հուվըրի հետ տեսակցութիւնը եւ մարտանաւերու զեղջման խընդիրը։ Դարերէ ի վեր Անգլիա իր նաւային ոյժով կը հպարտանայ։ Իրեն համար սուրբ եւ անփոփոխելի սկզբունքըրած է թէ իր մարտանաւերուն թիւը եւ անոնց ոյժը ուրիշ ոեւէ տէքութեան ծովային ոյժը պէտք է գերազանցէ, որպէս զի միշտ ինքը ըլլայ ծովերու թագուհին։ Անգին նոյնպէս աֆգլիսիստ, իրեն չափ՝ թերեւս իրմէ ալ հարուստ՝ ուրիշ մեծ տէրութիւն ալ կայ։ Ենչպէս լեզուով նոյնպէս ծագումով, կրօնքով եւ ուրիշ շատ տեսակէտներով իրեն քոյր տէրութիւն մ'է։ Ան ալ Մեծն Բրիտանիոյ չափ մարտանաւեր կրնայ չինել։ Արդէն անոնք իրենց հետ մըցիլ սկսած եւ հաւասարած են։ Այս մըցումին ծայրը ո՞ւր պիտի հասնի։ Երկուքն ալ ի'նչ տհալին ծախսեր կ'ընեն մարտանաւեր չինելու համար։ Իրենց ժողովուրդներուն վրայ ի'նչ ծանր բեռեր կը դնեն։ Մէքտոնալտ խորհեցաւ որ ասիկայ երկու տէրութեանց համար ալ պէտք չէ,

յիմարութիւն է: Եղբայրութեան հոգիին հակառակ է: Ուստի ելաւ Ամհրիգա գնաց: Հուլըրի հետ իբրեւ հղբայր կառավարիչներ միասին խորհրդակցեցան, կասկած չունիմ աղօթեցին, հասկացողութեան եկան: Մրցումին սահման դրին, ուրախութեամբ իրարմէ բաժնուեցան: Եւ մեծ Անգլիացին սրտի խաղաղութեամբ հայրենիք վերադարձաւ: Այսպէս՝ այս երկու մարդիկ փութորուարին գումարուելիք գինացեղջման ժողովին հիմնաքարը դրին: Մէքտոնալտի ըրածը բարոյական քաջութիւն և քաղաքական իմաստութիւն էր:

Գերմանիան և Աւստրիան արագաքայլ դէպի սնանկութեան կ'երթային. և եթէ այդ չարիքին դարման մը չէր գտնուէր ամբողջ աշխարհը չփոթութեան պիտի մատնուէր: Մէքտոնալտ կերպով մը անոնց օգնեց և ընդհանուր աղէտը արգելեց:

Բրիտանիոյ կայսրութեան պատմութեան մէջ անմոռանալի դէպք մը՝ Մէքտոնալտի անունը անմահացուց: Ինքը ամառուան արձակուրդի գացած էր: Հազիւ երկու շաբաթ անցած էր, երբ իրեն հեռագրութեամբ թէ օտար երկիրներու զբամառէրները իրենց ոսկիները Լոնտոնի զբամատունէն կը քաշեն և զբամատունը իր գարաւոր պատիւը կորսնցնելու վտանգի մէջ է: Ճշմարիտ Անգլիացի մը այս աղէտին չէր կրնար դիմանալ: Անմիջապէս Լոնտոն վերագարձաւ: Միւս ընկերները իրենց գումունած տեղերէն ետ կանչեց: Ժողով գումարեց եւ ըսաւ թէ, երկիրը տնտեսական տագնապէ ապատելու մէկ ճամբայ կայ, ոչ թէ կուսակցական այլ ազգային կառավարութիւն մը կազմել: Իր աշխատաւորական ընկերները ասոր հակառակեցան: Սակայն՝ Մէքտոնալտ իր սրբուհին վրայ հաստատ մնաց: Ընկերները զինքը լքեցին, ինքն ալ իր սիրած եւ անոր համար տարիներով ան-

խոնջ աշխատած կուսակցութենէն բաժնուեցաւ: Հակառակ իբրեւ դաւաճան պախարակուելուն, գնաց իր միտքը պահպանողական պետերուն յայանեց և Ճորճ Թագաւորին դիմեց: Անոր հայրենասիրութեան եւ անկեղծութեան և եռանդին վստահելով՝ Պալատինի պէս պահպանողականներ իրեն նեցուկ ըլլալու խօսք տուին: Հետեւաբար նոր կառավարութիւնը կազմելու գործը նորէն իրեն յանձնուեցաւ: Նոր ընտրութիւն կատարուեցաւ: Ամբողջ երկիրը կացութեան տեղեկ եղաւ: Անգլիացին նորէն ցուցուց թէ իրենք հայրենիքին շահը ամէն կուսակցական շահերէն վեր կը բռնեն, եւ անոր ղեկը, առանց անձնական և կուսակցական նկատումներու, վստահելի անձերու յանձնելը գիտեն: Քուէն՝ ահագին մեծ ամասնութեամբ ազգային կառավարութեան ի նպաստ տրուեցաւ, եւ այսպէս խառն եւ զօրաւոր կառավարութիւն մը կազմուեցաւ: Այս նոր կառավարութիւնը անմիջապէս գործի սկսելով, երկիրը անօգուտ ծախսերէն ազատելու եւ հասոյթի նոր աղբիւր գտնելու ձեռնարկեց: Տօյ ընունած դրութիւնով կառավարութենէն շաբաթական գումար մը առնող ծոյլ անգործներու թիւը, միջին հաշուով զերեթէ մէկ տասներորդին իջեցուցին: Սթերլինի արժէքը պակսեցնելով և կերակուրի, հագուստի և այլ պէտքերուն իւթերուն գինը նոյնը պահելով ժողովուրդին ապրուստը զիւրացուցին, ուրիշ երկիրներէն անգլիական ապրանքներու ապաւորանքը մեծ թափով յառաջ գնաց: Արտածումի նոր ապրանքներ շինելու համար գործարանները սկսան նոր թափով գործել. անգործներու թիւը պակսեցան և երկրի վարկը բարձրացաւ: Մեծն Բրիտանիոյ պատիւը և ամբողջ աշխարհի վաճառականութեան կեդրոնը ճանչցուած Անգլիական զբամատունը մեծ աղէտէ մը աղատեցաւ:

Այս ամէնը եղան, վասն զի տէրութեան ղեկը ձեռք առնող Բէմդի Մէքտոնալտ ամէնուն կողմէ ճանչցուած է իբր անձնական և փարթիական նկատումներէ ազատ, իմաստուն, անձնուէր, քաջ հայրենասէր և ՎՍՍՆՀԵԼԻ անձնաւորութիւն մը: Երանի՜ թէ բոլոր հայեր, աշխարհականներ, հոգեւորներ և մտաւորականներ այս աշխարհական առաջնորդէն բաներ մը սորվէին:

* * *

Երրորդ՝ Բեմդի Մեքտոնալտ իբր խօսող և գրող մարդ: Լեզուն յստակ, կերպը գրաւիչ, խորհուրդները հասուն, ձայնը անուշ, կեցուածքը գեղեցիկ, ունեկնդիրներուն հետ կարեկից հաղուագիւտ խօսող մըն է: Նաեւ անոր զբոսուածքը կարգալ իրական հաճոյք մըն է: Բնութիւնը կը սիրէ. ծաղիկներու, բոյսերու, թռչուններու, ձուկերու, չորքստանիներու մասին ըրած պատմութիւնները լսելէն մարդ բնաւ չի ձանձրանար: Իր տունը, պարտէզը, ընտանիքը շատ կը սիրէ: Իրեններուն մէջ տեղը, Ճերմակ պալատը պաշտօնին գլուխը, մեծ անձնաւորութիւններով շրջապատուած և մեծ պատիւներով ազդողուած, կամ հազարաւոր ունեկիրներ ափի բերան զինք մտիկ ըրած ատեն նոյն հեզ, համեստ, անկեղծ և յարգելի մարդը կը տեսնես, նաեւ ճշմարիտ բարեկամ և ընկերը: Անոր մեծութիւնը խոնարհութեան, ծառայիչ և հոգիին մէջն է: Այժմ վաթսուներ զեց տարեկան է, սակայն երիտասարդի մը չափ զուարթագէմ, խաղը և զբօսանքը սիրող, ընկերային յարաբերութիւնները յարգող և վաշխող մըն է: Կարգալը շատ կը սիրէ: Ճոխ և ընտիր հատորներով լեցուն գրադարանին մէջ կարդալով և գրելով զբաղած ժամերը իրեն համար շատ թանկագին են: Ահա այս է մեծ ազգին այս օրուան մեծ նախարարապետը:

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՆՈՒԿ

Անգլիոյ մէջ Cunarder «534» նուանը շոգենաւ մը կը շինուի որուն նմանը տակաւին աշխարհ տեսած է: Շոգենաւին երկայնութիւնը 1018 տար է և կ'արժէ երեսուն միլիոն տոլար: Այս շոգենաւը մասնաւորապէս կը շինուի Գերմանիոյ նաւային ուժը տկարացնելու համար: Ասոր ծաւալը 7, 300,000 խորանարդ տար է և կրնայ 73,000 թօնօ ապրանք փոխադրել: Կամ մըջակը 650 տար երկայնութիւն ունի:

Ովկիանոսին զբայէն ահագին արագութեամբ նա պիտի սուրայ ժամը 40.5 մղոն և Ադլանդեանը պիտի կրնայ կըտրել անցնել 90 ժամուայ մէջ: հաւանական է որ Հասարակածի շրջանը 25.9 օրէն ընէ: Այս շոգենաւը զարդարելու համար 2,500,000 տոլար պէտք է: Տասը մղոն կապերտ հազիւ պիտի բաւէ անոր սենեակները ծածկելու: տասը հազար ելեկտրական լամպաներ պէտք պիտի ըլլան վայն լուսաւորելու: Նաեւ լսելը կը կշռէ 100 թօնօ, և 300էն աւելի մօթօրներ անոր ելեկարաւանութիւն պիտի արտադրեն: Ասկէ վատ կրօնական պաշտամունքի համար առանձին մատուռ մը պիտի ունենայ: Իրարու զբայ աստիճանաբար ունի տասը կամրջակներ: Թէնիս և կոլֆ (գնդակախաղ) խաղալու համար մասնաւոր կերպով շինուած գետիներ ունի: Կամրջակներէն ոմանք գեղեցիկ պարտէզներ պիտի ունենան, որոնց մէջ պիտի գտնուին լողալու համար աւազաններ:

Այս վիթխարի շոգենաւը աշխարհի միայն մեծ և նշանաւոր նաւահանգիստները պիտի կրնայ խաբիսի գնել: 1933 ին, Հոկ. ամսուն, ծով պիտի լընէ այս նաւը, որ թէք հաբիւր նաւակներ կը

պարունակէ պէտք եղած տառն։ Իր կամրջակներուն վրայ 50,000 մարդ կրնայ հանգիստ կերպով զետեղուիլ։ Տակաւին որոշ անուն մը չունի, սակայն հաւանական է որ Բիւնարտիա, Վիկտորիա և կամ Բրիտանիա դրուի անոր անունը։ Անգլիա, աշխարհի մէջ տակաւին չկառուցուած և չտեսնուած շագենաւը կը պատրաստէ, որպէսզի աշխարհ գիտնայ թէ՛ ինքն է՝ որ կ'իշխէ ծովերու և ավերանոսներու վրայ։

Միջազեռքի մէջ պեղումներ կատարուեցան վերջերս և երեւան ելան ջրհեղեղի հեռքերը նոյն հաւաքեալի ժամանակէն մնացած։ Խորունկ գետին տակը ընդարձակ տարածութեամբ և խորնկութեամբ տիղմ երեւան ելած է։ Տիղմին թէ մակերեսը և թէ յատակը տնական և ուրիշ տեսակ գործիքներ գտնուած են։ Ասորեստանեան ցեղէն մնացած պնակիտներ ալ (tablets) հանուած են որոնք ջրհեղեղի պատմութիւնը կ'աւանդեն։

Մասնաւոր ելեկտրական լամպաներ կան՝ որոնք արթնեատական արեգապնային ճառագայթ կուտան անդրմանիչակագոյն լոյսի ձեւով։ Հաւերը այս ելեկտրական ճառագայթներուն ենթարկուելով թէ՛ որակով և թէ՛ քանակով աւելի գոհացուցիչ հաւկիթներ յառաջ եկած են։ Հաւկիթներուն թիւը, մեծութիւնը և ծանրութիւնը աւելցած է։ Խումբ մը հաւերը որոնք մէկ ամիս այս լոյսին ենթարկուած էին 868 հաւկիթներ աւելի ածեցին քան նոյն թիւով ռաբի խումբ մը հաւերէ՝ որ ելեկտրական հոսանքի ենթարկուած չէին։ Այս հաւկիթները աւելի հարուստ են կենսամին Դ ով, և անոնց վառեակները աւելի առողջ և զօրաւոր կ'ըլլան։

Բիմիաբաններ Լոնտոնի կազ արտադրող ընկերութեան աշխատանքին

մէջ պարապած ժամանակ, կրցան նոր կերպ մը գտնել բուժելու համար յօդալի հիւանդութիւնը և նոր թոքախտի բռնուած հիւանդները։ Ասոնք կը բուժուին հանքածուխի կազէն արտադրուած անդրմանիչակագոյն և ենթակարմիր ճառագայթներով որոնք բուժիչ յատկութիւններ ունին։ Ուռած յօդերը և քրոնիկ յօդացաւը այս կերպով բուժուած են։

Մարդկային պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով ակոյալի փոսթիւնը արդիւիւն միջոցը գտնուած է։ Փրոֆէսոր Մըքուլլըմ իր տասը տարուան անասուններու վրայ կատարած փորձերէն վերջ կրցաւ վերջապէս յաջողիլ։ Ծանօթ է որ բերնին մէջ վիտամին միջոցներ յառաջ կը բերեն ակոյալի փոսթիւնը։ Միջոցներու այս սղդեցութիւնը կը չէզոքացուի լորձուքի միջոցաւ։ Լորձուքը այս չէզոքացուցիչ կարողութիւնը կ'ունենայ երբ ան իր մէջ պարունակէ պէտք եղած չափով Կիր (calcium), փոսփոր (phosphorus) և կենսամին Դ (Vitamin D)։ Լորձուքը այս տարրերը կ'ստանայ արիւնէն։ Իսկ որպէսզի արիւնը այս նիւթերը պալունակէ մենք պէտք է զանոնք պարունակող սնունդ առնենք։ Կենսամին Դ կ'ստանանք արեւէ կամ ձկան իւղէ, հաւկիթի դեղնուցէ, կարագէ և կաթէ։ Առատ կիր պարունակող սնունդներն են կաթ, հաւկիթ, ջրոտ կանաչեղէնք՝ մասնաւորապէս ոպանախ, հազար, կամր, և որոշ չափով ալ միրգերը։ Փոսփոր պարունակող սնունդներն են, կաթ, հաւկիթ, ֆասուլիա, ոլուն եւ սիսեռ, արջառի միսը առանց իւղի։

Անգլիոյ մէջ ալքոլ պատրաստուեցաւ փայտի սղցցուքէն որ իրական ալքոլին ամէն յատկութիւններն ալ կը պարունակէ։

Քաղեց՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

և անտուն որբուհիներու բնակութեան համար. այժմ խումբ մը որբուհիներ, ամուսական չնչին գումար մը միայն վճարելով այս շէնքին մէջ կը բնակին, որ կը կոչուի «Պատասպարան» վարիչն է Օր. Պաշալըզեան, ընթացաւարտ Աթէնքի Աստուածաբանական դպրոցէն:

Ասկէ հինգ տարի առաջ երբ վեր. Ե. Կէօքկէօզեան Պէյրութի Հայ Աւետ. Ա. եկեղեցւոյ հովուութեան հրաւիրուեցաւ, ընտանիքներու թիւը 105 էր. 30 ընտանիք զաղթած են զանազան տեղեր, բայց անոնց տեղը եկած են ուրիշներ, այժմ ընտանիքներու թիւն է 150:

Ատենէ մ'ի վեր կիրակի օրեր առտուն ժամը 8էն 8.30 ազօթաժողով, 8.30էն 9 Ա. Գրքի դաս և 9էն մինչև 10.30 քարոզ կ'ըլլայ:

Ամսոյս 19ին եկեղեցիին իսկոյն Ժողովը երեկոյթ մը տուաւ ժողովուրդին՝ եկեղեցիին սրահին մէջ. ասիկայ իրական վայելք մ'եղաւ: Ժամանակէն առաջ երկսեռ խումբ բազմութիւն մը գրաւած էր աթոռները: Երեկոյթը սկսաւ ժամը 8.30ին, Օր. Ծանեան և Տիկ. Ի. վէզեան երգեցին, ծանօթ երաժշտագէտ Տիար Իւվէզեան՝ ջութակի, Օր. Շատարեան՝ դաշնակի վրայ ընտիր կտորներ նուագեցին և վարձատրուեցան ժողովուրդին ծափերով:

Ներկաներուն հրամցուեցաւ թէյ և կարկանդակ:

Ամառուան ընթացքին վեր. Ե. Կէօքկէօզեան Զահլէի մէջ կը ծանօթանայ Ամերիկայէն նոր եկած 70 ամեայ Հայ ծերուկի մը, որը կը խոստանայ իր ունեցած 5,000 տոլարը Պէյրութի Հայ Աւետ. Ա. եկեղեցիին կտակել: Այս գումարը այժմ կը գտնուի Ամերիկեան Պարտին քով. բարեբարը ուրիշ դրամ չ'ունենալով՝ այս դրամին տեղատու գումար պիտի ապրի և մահէն յետոյ դրամը իր նպատակին պիտի գործածուի: Ազնուահոգի բարերարին անունը չ'յի-

շեցի՝ համեստութիւնը չ'վերաբերելու համար:

Այս եկեղեցիին Յուլիսէն սկսեալ ինքնաբաւ կը դառնայ, արտաքին ո՛չ մէկ օժանդակութիւն պիտի չ'ընդունի:

Պէյրութ ԵՐՈՒԱՆԴ Լ. ԱՂԵԿԵԱՆ
22 Փետր. 1932

Աթէնքի մէջ Ամերիկեան Պարտի վարած Աստուածաբանական ճեմարանը, թիւ Սֆուլ ավ Րիլիմըն, Պէյրութ փոխադրել որոշուած է դպրոցիս վարչական Ժողովին կողմէ: Մանրամասնութիւնք յաջորդիւ:

ՍՔՈՒԼ ԱՎ ՐԻԼԻՃԸՆԻ ուսանողութիւնը, 1922—1932 ին միջոցին, մեզի զրկուած վիճակագրական տախտակէ մը քաղելով:

Սֆուլ ավ Րիլիմըն՝ իր Կ. Պոլսոյ և Աթէնքի մէջ 10 տարուան գոյութեան միջոցին՝ ունեցած է թերաւարտ և ուսումնաւարտ 92 ուսանողներ. 47 Հայ, 14 Յոյն, 13 Պուլկար, 13 Ռուս, 1 Ասորի, 1 Թուրք, 1 Հունգարացի, 1 Զինացի, 1 Գերման: Բոլոր ուսումնաւարտներն թիւն է 38, որուն 22ը Հայ (16 Աւետ. 6 Առաք.): Դարձեալ ասոնցմէ 12ը կրօնական Դաստիարակութեան, 6ը Ընկերային Ծառայութեան և 20ը Աստուածաբանական ճիւղէն ուսումնաւարտ են: Ընդհանուր ուսանողութեան 21ը իգական, 71ը արական, եւ ուսումնաւարտներուն 17ը իգական, 27ը արական սեռէ եղած են:

ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻԻՆ, Հալէպ, կառավարական գործերուն պատասխանատու մարմնի մը մասնակցելու համար Էմամ-Նուէլ Եկեղեցիին 4 և Բէթէլ Եկեղեցիին 2 անդամներ ընտրած են:

ԽՕՍԵՅԵԱԼՔ

Տոքթ. (ատամնարոյժ) Էլիազար Ա. Շիրահեան և Օր. Եսթեր Տէր Մկրտիչեան:

FURST MCNESS ԱՌՈՂ-ՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նշանաւոր են իրենց մաքրութեամբն ու շինիչ ազդեցութեամբը,

ուստի

անարիւններ, տկարներ, հիւանդութենէ և վիրաբուժական գործողութենէ
նոր ապաքինողներ, պէտք է գործածեն**Furst mcness'****EXTRACT OF COD LIVER OIL TONIC**կոչուած բաղադրութիւնը, որ կը պարունակէ մաքուր ձկան յուլ (կենսահիւթ
«Ա» և «Դ»), մալթ, վայրի կեռաս, քինին, ընտիր գինի, երկաթ, մանկանէզ,
և այլն:Մեծապէս ԱնործԱՀԱՄ է, ԱՐԻՒՆԻ ԿԱՐՄԻ ԳՆԴԻԿՆԵՐԸ ԿԸ ԶՕՐԱՑՆԷ
ընդհանուր ՄԱՐՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ Կ'ՈՒԺՈՎՃԵՆԷ:

ՀԱՋ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ԶԱՓԱՀԱՍՆԵՐ

պէտք է գործածեն

Mcness mentholated cough syrup

Բաղադրութիւնը,

կը պարունակէ զանազան ծառերէ, բոյսերու արմատներէ քաղուած հիւթիւր և
մենթոլ:Բորբոսած եւ գրգռուած կոկորդի բաղանքներուն վրայ կ'ազդէ, կոկորդը եւ
խուչափոդը կը մաքրէ եւ զիւլզոսե: Ախորժախմ եւ անուշ է:

ԿԸ ԳՏՆՈՒԻ ԲՈՂՈՐ ՅԱՅՏՆԻ ԴԵՂԱՐԱՆՆԵՐԸ

ԶՐԻ

Այս կտրօնը կարէ և ներկայացուր զայն

ՏԻԱՐ Ն. ԻՇԽԱՆԵԱՆԻ կամ

ՏԻԱՐ Ե. ՏԱՅԸԵԱՆԻ ԴԵՂԱՐԱՆԸ

և պիտի ստանաս նմոյշ մը

FURST MCNESS' EXTRACT OF COD LIVER
OIL TONIC էԹերձաւոր Արեւելքի Միակ ներկայացուցիչն է
Արթիւր Մաթոսեան, Հալէպ:

صاحب الامتياز والمدير المستول القس ق. هاروتونيان